հարկաւորութենէ 'ի աշխատանաց և արդեանց հարուստ կենդանի արանց զգուշութեամբ տանն հայոց։

ԳԼՈՒԽ ՅԷԹ.

Որ ոք կին 'ի միջի ժամանակի տեռատեսութեան իւրոյ թոյլ մի տացէ մերձենալ ընդ իւր առն իւր, և որ ոք այր եթէ բռնադատութեամբ մերձեսցի ընդ կին իւր ժամանակի տեռատեսութեան պատժեսցի, զի մի ծնցի որդի բորոտ ապականութիւն յաշխարհին հայոց։

ԳԼՈՒԽ ՅԶ.

Ամենայն տէր սպասաւորի, աղախնոյ, և ծառայի շաբաթն վեց աւուր կրթեսցի աշխատան 'ի նոցանէ, և 'ի եօթնում աւուր օր մի, կամ յաւուրն կիրակէի, կամ որում աւուր անվնաս գործին իւրոյ համարեսցի ազատ 'ի գործոց արասցէ, և ամենայն սպասաւոր և աղախին և ծառայ ունի արձակութիւն մի աւուր 'ի մէջ եօթն աւուրց հանգչիլ մտանել 'ի տունս աղօթից և 'ի դաշտս վասն զբօսնուլ և կամ լերինս վասն հորսոյ, եթէ չիցէ օրն կիրակի և կամ աղբերունս և գետս վասն լեղանալու, միմիայն մի ցերեկ այսինքն երկուտասան ժամ ժամանակաւ, իբր ելցէ հինգ ժամ առաւօտեան և դարձցի և մտցի 'ի տուն հինգ ժամ յերեկոյեան։